Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ
համայնքի ավագանու
2017 թվականի հունվարի 18 -ի
N 03 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶ

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Հ Ն Գ Ա Մ Յ Ա Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

Մշակվել է համայնքի ղեկավարի և համայնքապետարանի աշխատակիցների կողմից:
Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Արթուր Յայլոյանի կողմից:
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2017թ. հունվարի 18–ի թիվ 03 **- Ն** որոշմամբ:

Գ.ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ 2017Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

4. ՀԶՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

5. ՀԶՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով « Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Շահումյանի թ/ֆ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶՀԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի և Շահումյնաի թ/ֆ համայնքի ավագանու հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում ներառված են Շահումյանի թ/ֆ համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ: ՀԶՀԾ-ն ներառում է նաև Շահումյանի թ/ֆ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Շահումյանի թ/ֆ համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, համայնքի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

Շահումյանի թ/ֆ համայնքապետարանի աշխատակազմը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

Համայնքի ղեկավար՝ ***Ա. Յայլոյան***

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզ, Շահումյանի թ/Ֆ համայնք
Մարզկենտրոնը – Արմավիր

***Շահումյանի թ/Ֆ համայնքի տեսլականը**Շահումյանի թ/Ֆ գյուղը ակտիվ կյանքով ապրող համայնք է, որտեղ առկա բոլոր սոցիալ-տնտեսական, կենցաղային, հոգևոր-մշակութային խնդիրները գտնում են իրենց լուծումը, և համայնքի յուրաքանչյուր անդամ հնարավորություն ունի ակտիվորեն մասնակցելու համայնքում որոշումների կայացմանը և գործողությունների իրականացմանը, ինչպես նաև լրացնելու իր գիտելիքների, հմտությունների և փորձի պակասը:*

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Շահումյանի թ/ֆ գյուղական համայնքը գտնվում է Արմավիրի մարզի հյուսիս-արևելյան մասում, սահմանակից է Էջմիածին քաղաքային և Նորակերտ, Շահումյան գյուղական համայնքներին: Մարզկենտրոնից գտնվում է 33 կմ հեռավորության վրա, Էջմիածին քաղաքից՝ 6 կմ:

Շահումյանի թ/ֆ տեղանունը առաջացել է գյուղում խորհրդային շրջանում գործող Շահումյանի թռչնաֆաբրիկայից: 1950-ական թվականների սկզբին համայնքի տարածքում սկսվել է թռչնաբուծական ֆաբրիկայի կառուցումը: 1953 թվականին ֆաբրիկան շահագործման է հանձնվել: Թռչնաբուծական ֆաբրիկայում աշխատելու նպատակով Հայաստանի և նախկին ԽՍՀՄ-ի տարբեր բնակավայրերից գյուղ են տեղափոխվել և հիմնական բնակություն հաստատել տարբեր տարիքի և զբաղմունքի անձինք: Նախկին ֆաբրիկայի առկայության պատճառով գյուղը անվանվել է Շահումյանի թռչնաֆաբրիկա: 2002 թվականին ՀՀ տնտեսական դատարանի կողմից թռչնաբուծական ֆաբրիկան լուծարվել է և սնանկ է ճանաչվել: Տեղանունը ոչ մի անգամ չի վերանվանվել:

Գյուղը ծովի մակարդակից բարձր է 850 մետր, վարչական տարածքը կազմում է 293.8 հա, որից տնամերձ՝ 38.7 հա: Աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները՝ բարենպաստ: Համայնքի կլիման չոր ցամաքային է, ցուրտ սակավաձյուն, պարզկա ձմեռներով ու շոգ չորային ամառներով: Օդի ջերմաստիճանը ձռանը տատանվում է -3-ից – 25 աստիճան ըստ Ցելսիուսի, ամռանը՝ 13-ից 39 աստիճան: Տարվա եղանակներից համեմատաբար լավ է գարունը, ամառը տևական է՝ 4,5-5 ամիս: Տարեկան տեղումների քանակը կազմում է 200-ից 250 մմ, վերջին տարիներին նկատվում է տևական ձնածածկույթի սակավություն:

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.01.2017 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության առկա թվաքանակը	**1220**
2.	Տնային տնտեսությունների թվաքանակը	**216**
2.1	այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող	**2**
2.2	կիսակառույց տներում բնակվող	**2**
3.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	**35**

Համայնքի բնակչության 49% կազմում են տղամարդիկ և 51% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2017թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	**1220**	**631**	**589**
	մինչև 1 տարեկան	**11**	**6**	**5**
	1-2 տարեկան	**23**	**10**	**13**
	3-4 տարեկան	**27**	**17**	**10**
	5-6 տարեկան	**24**	**13**	**11**
	7-10 տարեկան	**61**	**30**	**31**

	11-14 տարեկան	**52**	**30**	**22**
	15-17 տարեկան	**28**	**14**	**14**
	18 և ավելի տարեկան	**871**	**430**	**441**
2.	Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում՝	**94**	**53**	**41**
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	**2**	**2**	**0**
4.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	**0**	**0**	**0**
5.	Հաշմանդամ երեխաներ	**0**	**0**	**0**
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	**0**	**0**	**0**
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	**0**	**0**	**0**
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	**1**	**0**	**1**
9.	Հաշմանդամներ	**7**	**5**	**2**
10.	Զբաղվածներ /հողագործությամբ/	**420**	**200**	**220**
11.	Գործազուրկներ	**451**	**350**	**101**
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	**39**	**26**	**13**
13.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	**0**	**0**	**0**

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԸ

- Շահումյանի թ/ֆ համայնքի վարչական տարածքը – 293.78 հա
- Գյուղատնտեսական նշանակության հողեր – 214.06 հա
- Բնակավայրային նշանակության հողեր – 45.88 հա
- Արդյունաբերական հողեր - 28.64 հա
- էներգետիկայի և տրանսպորտի հողեր - 3.31 հա
- հատուկ պահպանվող հողեր - 0 հա
- Ջրային ֆոնդեր – 1.89 հա
- այլ – 0 հա
- Բնակավայրի տարածքը – 48.1 հա
- Հողի սեփականաշնորհման մասնակցած ընտանիքների թիվը - 203
- Մեկ հողաբաժնի չափը մինչև 0.19 հա
- Շահումյանի թ/ֆ համայնքի սեփականություն համարվող հողեր – 177.84 հա

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

- Շահումյանի համայնքի 2017 թվականի ընդհանուր բյուջեն կազմել է 26570.5 հազար դրամ:
- Համայնքի բյուջեի մեջ համայնքի սեփական եկամուտը կազմում է 8 %:
- Համայնքում հիմնականում զբաղվում են թռչնաբուծությամբ :
- Համայնքում զարգացած է գյուղատնտեսության հետևյալ ճյուղերը՝
- խաղողի այգիներ տարեկան շուրջ 10.0 տոննա
- պտղատու այգիներ տարեկան շուրջ 6.0 տոննա

- Գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը իրականացվում է տեղում և մթերող կազմակերպություններում:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Շահումյանի թ/Ֆ համայնքի ղեկավարը վերընտրվել է 5-րդ անգամ անընդմեջ 2014թ. դեկտեմբերի 12-ին: Համայնքի ավագանին բաղկացած է 5 անդամներից, ընտրվել է 2016թ. սեպտեմբերի 18-ին:

Համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է 11 աշխատակիցներից՝ հետևյալ կառուցվածքով

1. Համայնքի ղեկավար - 1
2. Տեղակալ - 1
3. Համայնքային ծառայողներ - 4
4. Տեխնիկական աշխատող - 4

Բնակարանային և կոմունալ տնտեսություն

Համայնքի բնակելի ֆոնդը կազմում է 71 առանձնատուն, որոնք սեփական միջոցներով կառուցված բնակելի տներ են: Նոր թաղամասում, որը հիմնվել է 1980-ականների սկզբին, այժմ ավելի քան 20 տների շինարարություն գտնվում է տարբեր աստիճանի անավարտ վիճակում:

Համայնքում գազաֆիկացման ցանցի վերագործարկման աշխատանքները սկսվել են 2000 թվականից և շարունակվում են մինչև օրս: 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ գազամատակարարմամբ ապահովված են համայնքի մոտ 50 ընտանիքներ, այդ թվում՝ հին գյուղատեղի 50 %-ը, իսկ նոր գյուղատեղը՝ Ավան կոչված թաղամասը և բազմաբնակարան եռահարկ 2 շենքերը գազաֆիկացված չեն:

Համայնքի ճանապարհները ասֆալտապատված չեն: Ըստ գլխավոր հատակագծի համայնքում նախատեսվում է կառուցել մանկապարտեզ: Վերոհիշյալ ծրագրի իրականացումը կխթաներ համայնքի զարգացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, սակայն այն պահանջում է զգալի կապիտալ ներդրումներ, որը համայնքի բյուջեի միջոցներով անհնար է իրականացնել:

Համայնքի փողոցները ապահովված են փողոցային լուսավորման համակարգերով: Երեկոյան և գիշերային ժամերին այդ փողոցներով երթևեկելը և՛ վարորդների, և՛ բնակիչների համար առավել անվտանգ և ապահով է:

Նախորդ տարիներին մեծ աշխատանքներ են կատարվել ջրամատակարարման ասպարեզում, որի արդյունքում լուծվել է գյուղի բնակչության խմելու ջրի հարցը, իրականացվել են նաև ջրամատակարարման ներքին ցանցի որոշ հատվածների վերանորոգման աշխատանքներ:

Բնության և շրջակա միջավայրի պահպանություն

Բնության և շրջակա միջավայրի պահպանությունը նորմալ կեսագործունեության ամենաանհրաժեշտ գործոնն է, որի հետևանքով էլ համայնքի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը ազգաբնակչության կենցաղային աղբի տեղափոխման և համայնքի տարածքի մաքրության հարցն է: Բնակչության կենցաղային աղբի հեռացումը և համայնքի տարածքի աղբահանության կազմակերպումը այսօր բավարար հիմքերի վրա է, սակայն անհրաժեշտ է օր օրի որոնել և օգտագործել նոր տեխնոլոգիաներ բնության և շրջակա միջավայրի պահպանության ապահովման համար: Մեր համայնքը չունի անտառածածկ գոտի, սակավ են նաև կանաչապատ տարածքները, բացակայում են այգիներն ու պուրակները, որի հետևանքով առավել կարևոր է դառնում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների հավուր պատշաճի

կազմակերպումը, շրջակա միջավայրի պահպանումը, նորմալ կենսագործունեության ապահովումը:

Այս ծրագրում իրականացվող գործառույթները հետևյալն են

ա. փողոցների սանիտարական մաքրում,

բ. կենցաղային աղբահանություն,

գ.գերեզմանատան տարածքի մաքրում,

դ.թափառող կենդանիների վնասազերծում:

Փողոցների սանիտարական մաքրման, կենցաղային աղբահանության աշխատանքներն իրականացվում են Շահումյանի թ/ֆ համայնքապետարանի միջոցով:

Նախատեսվում է շարունակել այս աշխատանքների կատարումը նաև հաջորդ տարիներին, ավելացնելով աղբահանության ծավալները, բնակչության շրջանում աշխատանք տանել շրջակա միջավայրի մաքրության և պահպանության ապահովման գործում, բարելավել ծառայությունների մատուցման որակը:

Կանաչապատման ուղղությամբ նույնպես համայնքապետարանը նախատեսում է իրականացնել որոշակի ծրագրեր, այդ թվում՝ կազմակերպել ծառատունկ համայնքապետարանի շրջակայքում:

Բնության և շրջակա միջավայրի պահպանության կարևորագույն գործոններից մեկը կեղտաջրերի հեռացման (կոյուղու) համակարգերի կանոնավոր գործունեությունն է: Նախորդ՝ 2016 թվականին, նույնպես իրականացվեցին կեղտաջրերի հեռացման համակարգերի կառուցման որոշակի աշխատանքներ:

Նախատեսվում է այդ աշխատանքները իրականացնել շարունակական ծրագրով: Սակայն այս ծրագրի իրականացումը բացառապես համայնքի բյուջեի միջոցների հաշվին կատարելը իրատեսական չէ: Անհրաժեշտ է ուսումնասիրել ներդրումային դաշտը, որոնել և գտնել շահագրգիռ անձանց և կազմակերպությունների, համագործակցել նրանց հետ: Ծրագրին աջակցելու, որոշակի ներդրումներ կատարելու դեպքում ամբողջ ծավալով ծրագրի իրագործումը կհամարվի իրատեսական:

Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն և կապ

Համայնքը շատ մոտ է գտնվում Էջմիածին քաղաքին, և համայնքի բնակիչները հիմնականում օգտվում են Էջմիածին - Աշտարակ, Էջմիածին – Այգեշատ տրանսպորտի միջոցներից՝ ավտոբուս, միկրոավտոբուս, որոնք անցնում են հարևան՝ Շահումյան գյուղի միջով:

Համայնքի բնակչության մոտ 90 %-ն ապահովված է բջջային հեռախոսակապով: Համայնքում գործում են «ԲիԼայն», «ՎիվաՍել» և «Օրանժ-Արմենիա» բջջային ցանցերը, կա ինտերնետ կապ: Բնակչությունը հնարավորություն ունի դիտելու ավելի քան 20 հեռուստաալիք:

Համայնքի բնակիչներն օգտվում են Շահումյան գյուղի կանոնավոր գործող փոստատնից:

2014-2017 թվականներին իրականացվել են համայնքի փողոցների բարեկարգման և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, որի արդյունքում ճանապարհների փոսերը լցվել են խճաքարերով:

Սակայն շատ են նաև ճանապարհային տնտեսության հետ կապված խնդիրները: Նոր Ավան թաղամասում ոչ բոլոր ճանապարներն են բարեկարգ: Այդ թաղամասում ճանապարհային տնտեսության ոլորտում դեռևս չեն իրականացվել ներդրումներ: Իսկ նշված աշխատանքները պահանջում են զգալի ֆինանսական ներդրումներ: Համայնքի բյուջեի միջոցների հաշվին անհնար է նշված ծրագրերի իրականացումը, սակայն նախատեսվում է հնգամյա ծրագրի ընթացքում որոնել դոնոր կազմակերպություններ, հնարավորության դեպքում օգտվել սոցիալական ներդրումային ծրագրերից և այդ թաղամասում նույնպես իրականացնել

նախատեսված ծրագրեր:

Կրթություն

Համայնքը չունի դպրոց: Շահումյանի թ/ֆ գյուղի երեխաները հաճախում են հարևան՝ Շահումյան գյուղի միջնակարգ դպրոց: Քանի որ այս երկու համայնքները միմյանց շատ մոտիկ են, չկա բաժանող հեռավորություն, ուստի այն դժվարություն չի առաջացնում բնակիչների համար: Շահումյան համայնքում գործող կրթական հաստատությունները՝ դպրոցը և դպրոցին կից գործող նախակրթարանը մշտապես գտնվում են Շահումյանի թ/ֆ համայնքի ղեկավարի ուշադրության կենտրոնում: Համայնքապետարանի կողմից իրականացվում են մի շարք ծրագրեր խթանելու կրթության մակարդակի բարելավմանը, օժանդակելու կրթօջախի առջև ծառացած խնդիրների լուծմանը:

Համայնքն ունի 1221 բնակիչ, որոնցից մինչև 6 տարեկան՝ 65 երեխա: Սակայն համայնքը չունի մանկապարտեզ՝ կազմակերպելու երեխաների նախադպրոցական կրթությունը: Համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ 2011 թվականի սեպտեմբեր ամսից Շահումյանի թ/ֆ համայնքապետարանի աջակցությամբ Շահումյան գյուղում գործում է նախակրթարան, որտեղ հաճախում են նաև Շահումյանի թ/ֆ համայնքի նախադպրոցական տարիքի երեխաները: Սակայն այս ծրագրի իրագործումը չի նվազեցնում համայնքում մանկապարտեզ կառուցելու անհրաժեշտությունը, որը առանց նպատակային հատկացումների գրեթե անհնար է իրագործել: Այն իրագործելու համար անհրաժեշտ է միավորել համայնքի բնակիչների, շահագրգիռ կազմակերպությունների ուժերը, բնակչության շրջանում տանել բացատրական աշխատանք՝ աջակցելու և սատարելու ծրագրի իրականացմանը: Նախատեսվում է հնգամյա ծրագրի ընթացքում սկսել մանկապարտեզի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակումը:

Նախատեսվում է ընթացիկ տարվանից սկսել ծրագրի իրագործումը՝ աստիճանաբար կանոնակարգելով և կենտրոնացնելով նախադպրոցական տարիքի երեխաների կրթության կազմակերպումը:

Հանգիստ, մշակույթ, սպորտ

Համայնքը չունի մշակույթի տուն, մարզահրապարակներ, որի հետևանքով երիտասարդությունը զրկվում է իր ակտիվ հանգիստը կազմակերպելու հնարավորությունից: Սակայն համայնքում կազմակերպվում են երիտասարդական միջոցառումներ: Նախատեսվում է առաջիկայում նույնպես շարունակել այս աշխատանքները՝ հնարավորինս շատ մասնակիցներ ընդգրկելով իրականացվող ծրագրերում:

Շենքային պայմաններ չունի նաև գրադարանը, որը գործում է համայնքապետարանի շենքում: Գրադարանն ունի ավելի քան 1000 կտոր գրականություն:

Մշակութային հիմնարկների առկայությունը խթան կհանդիսանար համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, կրթական, ֆիզիկական դաստիարակության զարգացման գործում, սակայն համայնքի բյուջեի միջոցների հաշվին այս ծրագրերի իրագործումը գրեթե անհնար է: Այստեղ նախատեսվում են որպես ֆինանսավորման աղբյուրներ օգտագործել սոցիալական հիմնադրամների միջոցները:

Առողջապահություն

Համայնքի վարչական տարածքում գործող միակ առողջապահական հիմնարկը բուժկետն է, որը գործում է Շահումյանի թ/ֆ համայնքապետարանի շենքում: Տարածքը վերանորոգվել և

շահագործման է հանձնվել 2011 թվականի գարնանը Շահումյանի թ/ֆ համայնքապետարանի և Սեյվ դը չիլդռեն (<< Save the children >>) կազմակերպության համատեղ միջոցների հաշվին:
Շենքը կահավորված է առաջին բուժօգնության անհրաժեշտ տեխնիկական միջոցներով:
Համայնքապետարանի կողմից անընդմեջ աջակցություն և վերահսկողություն է իրականացվում, որպեսզի պատշաճ մակարդակով կազմակերպվի համայնքի բնակչության բժշկական սպասարկումը:

Առևտուր և սպասարկում

Համայնքի տարածքում առևտրի օբյեկտների
ընդհանուր թիվը կազմում է 1, այդ թվում՝

- առևտրի փոքր օբյեկտներ -1

Հիմնախնդիրներ՝
տեղեկատվական սարքավորումների բացակայություն:

Էներգամատակարարում

Շահումյանի թ/ֆ համայնքի էներգահամակարգը կառավարվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության կողմից:
Շահումյանի թ/ֆ համայնքի գազամատակարարումը իրականացվում է « Գազպրոմ – Արմենիա» ընկերության կողմից:

Արտաքին լուսավորություն

2017թ. հունվարի 1-ի դրությամբ Շահումյանի թ/ֆ համայնքում լուսավորվող փողոցների թիվը կազմել է 6: Փողոցների հենասյուների վրա տեղադրվել են լուսատուներ:
Հիմնախնդիրներ՝ անհրաժեշտ է շարունակել արտաքին լուսավորության համակարգի կառուցման աշխատանքները, հետագայում ընդգրկելով ևս Ավան թաղամասի մնացած 2 փողոցները:

2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

Համայնքում իրականացվում են ծրագրեր համայնքապետարանի կողմից՝

1. ***Փողոցների վերանորոգում***
2. ***Համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման ավարտ***
3. ***Մանկական խաղահրահարակների կառուցում***
4. ***Համայնքապետարանի շենքի ընթացիկ նորոգում***
5. ***Ջրահեռացման համակարգի վերանորոգում***
6. ***Նախադպրոցական կրթության կազմակերպում***

Ծրագիր 1. Փողոցների վերանորոգում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Փողոցներից ասֆալտապատված է 1-ին փողոցի կեսը, մինչև Ավան թաղամասը: Նախատեսվում է շարունակել ծրագիրը, իրականացնել փոսային նորոգումներ բոլոր փողոցներում:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակն է ապահովել տրանսպորտային բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ՝ տարվա բոլոր եղանակներին, վերացնել փողոցների ջրափոսերը, բարեկարգել փողոցները:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

1)ուսումնասիրել այն փողոցների ցանկը, որտեղ անհրաժեշտ է իրականացնել բարեկարգման աշխատանքները և ըստ առաջնահերթության հաստատել այն.

2)կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.

Ծրագրից սպասվող արդյունքները

Ծրագիրն իրականացնելը հնարավորություն կտա համայնքի փողոցները բերել բարեկարգ տեսքի, երթևեկության համար ստեղծել բավարար պայմաններ:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի իրականացման համար կպահանջվի մոտ 1.0 միլիոն դրամ, ուստի նպատակահարմար է փողոցների բարեկարգումը կատարել միայն համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

Ծրագիր 2. Համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ավարտում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Անհրաժեշտ է շարունակել արտաքին լուսավորության համակարգի կառուցման աշխատանքները, հետագայում ընդգրկելով ևս Ավան թաղամասի մնացած 2 փողոցները:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

1)ուսումնասիրել և ճշտել այն փողոցների ցանկը, որտեղ առաջնահերթ պետք է իրականացնել ծրագիրը.

2) կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը և շարունակելով լուսավորման համակարգերի կառուցման և դրանց սպասարկման աշխատանքները, հնգամյա ծրագրի վերջում՝ 2021 թվականին, համայնքի բոլոր փողոցները ապահովված կլինեն լուսավորվածությամբ, առավել կբարելավվի համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով 0.6 կմ երկարությամբ փողոցների արտաքին լուսավորության անցկացման աշխատանքների արժեքը կկազմի մոտ 300.0 հազար դրամ:

Ծրագիր 3. <u>Մանկական խաղահրապարակների կառուցում</u>

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ծրագիրը նախատեսում է համայնքի երեխաների հանգիստը կազմակերպելու, տարբեր խաղային ատրակցիոններ տեղադրելու ծառայությունները:

Համայնքում խաղահրապարակների, մանկական այգիների ու պուրակների բացակայությունը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ազատ ժամանցի կազմակերպումը, շփումը այլ երեխաների հետ, ֆիզիկական դաստիարակությունն ու առողջության պահպանումը:

Հարմար տարածքների ընտրությունը, կանաչապատումը, պահպանումը:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

1)կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.

2)ընտրել տարածքները, կանաչապատել և կազմակերպել խաղային տարբեր ատրակցիոնների գնումն ու տեղադրումը.

3)ծրագիրն իրականացնել 2018-2021 թվականների ընթացքում:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը՝ համայնքի երեխաները իրենց ազատ ժամանակը կանցկացնեն մաքուր օդում խաղալով, շփվելով այլ երեխաների ու բնության հետ, որը կօժանդակի նրանց ֆիզիկական դաստիարակությանը, առողջության ամրապնդմանը.

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով երկու խաղահրապարակի կառուցման, կանաչապատման և կահավորման համար անհրաժեշտ է 1,0 մլն դրամ ֆինանսական միջոցներ:

Ծրագիր 4. <u>Համայնքապետարանի շենքի ընթացիկ նորոգում</u>

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ծրագիրը նախատեսում է համայնքապետարանի շենքի աշխատասենյակների հատակների նորոգման, ինչպես նաև ներքին հարդարման աշխատանքների իրականացումը:

Համայնքապետարանի շենքի որոշ աշխատասենյակների հատակների վատ վիճակը, որոնք չեն վերանորոգվել շենքը շահագործելուց ի վեր:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Համայնքապետարանում նորմալ և բարեկեցիկ աշխատանքային պայմանների ապահովումը, փոշու վերացումը, քանի որ համայնքապետարանը հագեցված է ժամանակակից սարքավորումներով և համակարգչային տեխնիկայով:

Աշխատանքների իրականացման այնպիսի ժամանակահատվածի ընտրությունը, որը չխաթարի համայնքապետարանի նորմալ գործունեությունը:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

1) կազմել ծրագրի իրականացման նախահաշվային փաստաթղթերը.

2)աշխատանքները կազմակերպել հաջորդաբար՝ չխախտելով աշխատանքային գործառույթների իրականացումը.

3)ծրագիրն իրականացնել 2017-2021 թվականների ընթացքում:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը՝ կբարելավվի համայնքի բնակչության սպասարկումը, կապահովի համայնքապետարանի աշխատակիցների համար բարեկարգ միջավայրում աշխատանքների կազմակերպումը, կապահովի համակարգչային տեխնիկայի և սարքավորումների բնականոն աշխատանքը:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով համայնքապետարանի սենյակների հատակների նորոգման համար կպահանջվի 0.6 մլն դրամ:

Ծրագիր 5. <u>Ջրահեռացման (կոյուղու) համակարգի վերանորոգում</u>

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ծրագրի առաջնահերթության հիմնավորումը բացատրվում է նրանով, որ գյուղի բնակելի թաղամասերում դեռևս որոշ մասով խաթարված է կենտրոնացված կոյուղագծի համակարգը, որի պատճառով մարդիկ օգտագործում են տնամերձ հողամասերում կառուցված կոյուղահորերը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Նախատեսվում է մշակել համայնքի կոյուղագծի առանձին հատվածների նախագծերը և շարունակական ծրագրով այդ աշխատանքներն իրականացնել՝ յուրաքանչյուր տարի առավել մեծ ծավալներ իրագործելով:

Ծրագրի նպատակն է կանխել շրջակա միջավայրի աղտոտումը և բարելավել բնակչության կենցաղային պայմանները:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

1)կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.

2)ուսումնասիրել ներդրումային դաշտը.

3)կազմակերպել գնումների գործընթաց, կնքել պայմանագրեր շինարարական աշխատանքների կատարման և այդ աշխատանքների իրականացման ընթացքում հսկողության վերաբերյալ:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը՝ հնգամյա ծրագրի վերջում կարելի կլինի առավելապես ապահովել բնակչության՝ ջրահեռացման համակարգերից օգտվելու հնարավորությունը, կբարելավվի համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախատեսվում է հնգամյա ծրագրի շրջանակներում համայնքի բյուջեի միջոցների հաշվին կազմակերպել ջրահեռացման (կոյուղու) համակարգերի վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների գնման գործընթացը:

Ներդրումային ծրագրերի առկայության դեպքում համայնքապետարանը կաջակցի ծրագրի իրականացմանը:

Հաշվի առնելով այն, որ կոյուղու ցանցի վերանորոգումը համայնքի համար հանդիսանում է կարևոր խնդիր և ծրագրի իրականացումը բացառապես համայնքի բյուջեի միջոցների հաշվին իրատեսական չէ, ներդրումային ծրագրերի, շահագրգիռ անձանց և կազմակերպությունների կողմից ներդրումներ կատարելու դեպքում համայնքապետարանը կհամագործակցի նրանց հետ՝ ներգրավելով նաև բնակչությանը:

Ծրագիր 6. <u>Նախադպրոցական կրթության կազմակերպում և ապահովում</u>

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների առողջ ապրելակերպի, կրթության, մտավոր և ֆիզիկական բնականոն, ներդաշնակ զարգացման ապահովումը: Համայնքում նախադպրոցական կրթօջախների բացակայությունը:

Համայնքում հաշվառված են մինչև 6 տարեկան 63 երեխաներ, սակայն համայնքը չունի մանկապարտեզ, որը հնարավորություն կտա նախադպրոցական կրթական ծրագրերի ուսուցմամբ երեխաներին նախապատրաստել դպրոցական ուսուցմանը: Ներկայումս բնակչությունն օգտվում է Շահումյանի միջնակարգ դպրոցին կից գործող նախակրթարանից:

Նախատեսվում է համակարգել նախադպրոցական կրթության կազմակերպման աշխատանքները: Ծրագրի կատարման հիմնավորումը բացատրվում է նրանով, որ նախադպրոցական կրթությունը կխթանի համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացմանն ու դաստիարակությանը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի նպատակն է երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը, առողջ, զարգացած, կրթված սերունդ ունենալը, նպաստելու երեխաների կյանքի, առողջության պահպանմանը և ամրապնդմանը, ներդաշնակ ու համակողմանի զարգացմանը, ուսուցմանն ու դաստիարակությանը:

Ծրագրից սպասվող արդյունքները

Նախադպրոցական հաստատության բացակայությունը բացասաբար է անդրադառնում նաև այն ընտանիքների սոցիալական վիճակի վրա, որտեղ կան նախադպրոցական տարիքի երեխաներ, որոնց մայրերը ստիպված են չաշխատելու և կազմակերպելու մանկահասակ երեխաների առօրյան և դաստիարակությունը:
Իրականացնելով ծրագիրը, համայնքի բոլոր ընտանիքները կունենան հնարավորություն՝ հավասարապես օգտվելու նախադպրոցական կրթական ծրագրերից, որտեղ կստեղծվեն բոլոր պայմանները երեխաների կարողությունների, ընդունակությունների, ձիրքերի դրսևորման, ինչպես նաև նպաստելու երեխաների կրթության և գեղագիտական դաստիարակության զարգացմանը, աշխարհայացքի ձևավորմանը:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով 63 երեխաների նախադպրոցական կրթությունն ապահովելու նպատակով կպահանջվի տարեկան 10.0 մլն դրամ:

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2017թ.՝ 92.1%, 2018թ.՝ 92%, 2019թ.՝ 91.9 %, 2020թ.՝ 91.8%, 2021թ.՝ 91.7%,) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 4):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր քիչ են կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և դոնոր կազմակերպությունների հաշվին:

Աղյուսակ 3. Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
		փաստ.	փաստ.	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.	կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ	24040.5	26117.4	26570.5	26610.5	26630.5	26655.5	26680.5
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	1724.9	2100.1	2078.0	2118.0	2138.0	2163.0	2188.0
1.1	Հողի հարկ	537.9	540.9	528.0	528.0	528.0	528.0	528.0
1.2	Գույքահարկ շենք շինությունների և փոխադրամիջոցների համար	1187.0	1547.2	1480.0	1520.0	1540.0	1565.0	1590.0
1.3	Տեղական տուրքեր	0	12.0	15.0	15.0	15.0	15.0	15.0
1.4	**Գույքի վարձակալությունից եկամուտներ** Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	55.0	316.3	55.0	55.0	55.0	55.0	55.0
2	**Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ**	22260.6	23701.0	24492.5	24492.5	24492.5	24492.5	24492.5
2.1	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	22083.2	23701.0	24492.5	24492.5	24492.5	24492.5	24492.5

Աղյուսակ 4. Համայնքի 2017-2021թթ. բյուջեն

(եկամուտների կանխատեսումը 2015թվականի համեմատ աճը արտահայտված տոկոսներով)

Եկամտի և ծախսի տեսակը	2015թ. տարեկան պլան	2017թ. կանխ.	2015թ փաստ.նկատ %	2018թ. կանխ.	2015թ փաստ.նկատ %	2019թ. կանխ.	2015թ փաստ.նկատ %	2020թ. կանխ.	2015թ փաստ.նկատ %	2021թ. կանխ.	2015թ փաստ.նկատ %
Ընդամենը եկամուտներ	**23768.9**	**26570.5**	**11.8**	**26610.5**	**12.0**	**26630.5**	**12.0**	**26655.5**	**12.1**	**26680.5**	**12.2**
Հարկային եկամուտներ որից	**1453.3**	**2078.0**	**43.0**	**2118.0**	**45.7**	**2138.0**	**47.1**	**2163.0**	**48.8**	**2188.0**	**50.6**
Հողի հարկ	**528.0**	**528.0**	**0**	**528.0**	**0**	**528.0**	**0**	**528.0**	**0**	**528.0**	**0**
Գույքահարկ /շենք և ավտո/	**913.3**	**1480.0**	**62.0**	**1520.0**	**66.4**	**1520.0**	**66.4**	**1565.0**	**71.4**	**1590.0**	**74.1**
Տեղական տուրքեր	**12.0**	**15.0**	**25**	**15.0**	**25**	**15.0**	**25**	**15.0**	**25**	**15.0**	**25**
Այլ եկամուտներ	**55.0**	**55.0**	**0**	**55.0**	**0**	**55.0**	**0**	**55.0**	**0**	**55.0**	**0**
Պաշտոնական ընթացիկ դրամաշն.	**22260.6**	**24492.5**	**10**	**24492.5**	**10**	**24492.5**	**10**	**24492.5**	**10**	**24492.5**	**10**

2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կապիտալ վերանորոգման և բարեկարգման կարիք ունեն նախադպրոցական համայնքապետարանի շենքը, համայնքի փողոցները, համայնքի ջրահեռացման համակարգը:

- գործազրկություն,սոցիալապես անապահով աղքատ բնակչություն, ցածր աշխատավարձի առկայություն
- Ջրահեռացման համակարգի վատ վիճակ

Նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը միանգամից լուծելու համար:

2.6.Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն

Համայնքի զարգացումն ապահովող միջոցառումների մշակման և իրատեսական արդյունքների հասնելու համար իրականացվել է համայնքի ուժեղ և թույլ կողմերի, արտաքին միջավայրի կողմից ընձեռնված հնարավորությունների և սպառնալիքների գնահատում

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
1. Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայություն	1. Ճանապարհների անբարեկարգ վիճակ.

2. Հեռախոսակապի և հեռուստաընկերությունների առկայություն 3. Էջմիածին քաղաքին սահմանակից լինելը. 4. Բնակավայրի մեծ մասում ինքնահոս խմելու ջրի առկայություն. 5. Գյուղում բարձրագույն և միջնակարգ կրթությամբ մասնագետների առկայություն. 6. Համայնքի ղեկավար-ավագանի-բնակիչներ՝ ամուր կապ և փոխհամաձայնեցում. 7. Համայնքի ղեկավարի երկարամյա փորձ և ազգաբնակչության վստահություն: 8. Համայնքային իշխանությունը պատրաստակամ է համայնքում ներդրողներին նպաստավոր պայմաններ առաջարկելիս 9. Անշարժ գույքի ցածր գներ 10. Ոռոգման ցանցի առկայություն	2.Գործազրկության առկայություն, աշխատատեղերի սակավություն. 3. Ազգաբնակչության անվճարունակություն, սոցիալ-տնտեսական պայմանների ոչ բարձր մակարդակ. 4. Մանկապարտեզի բացակայություն, 5.Առկա գործազրկություն 6.Ոռոգման ջրի սղությունը և ցանցերի անմխիթար վիճակը. 7. ժամանցի սահմանափակ հնարավորություն հատկապես երեկոյան ժամերին 8. Ներդրումային ծրագրերի և արտասահմանյան ներդրողների բացակայություն 9.Այգիների բացակայություն, գյուղատնտեսության համար պիտանի հողերի սակավություն, հողերի անբերրիություն. 10.Նոր թաղամասի գազաֆիկացման ծավալների ավելացման անհրաժեշտություն
Հնարավորություններ	**Սպառնալիքներ**
- Հեռանկարային ծրագրեր, որոնք կբերեն ֆինանսական կայունության - Մեծ է աշխատուժի առկայությունը - Համայնքի ղեկավարն ու ավագանին վայելում են բնակչության վստահությունը	- Ջրահեռացման համակարգի մաշվածությունը - Համայնքում գործազրկությունը - Բնակչության անվճարունակ լինելը - Մանկապարտեզի բացակայություն

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Շահումյանի թ/ֆ համայնքի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Համայնքապետարանի ռազմավարական քաղաքականությունն է՝ հետևողականորեն բարեփոխումներ անցկացնել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման համար:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Հիմնական նպատակները

1) պաշտպանել համայնքի բնակչության իրավունքները և օրինական շահերը.
2) բարելավել համայնքի բնակչության կոմունալ-կենցաղային պայմանները.
3) ապահովել համայնքի շինությունների պահպանումը, շահագործումը և բարեկարգումը.
4) համայնքի տարածքում ստեղծել նոր աշխատատեղեր.
5) հատուկ ուշադրություն դարձնել կրթության օջախների նորմալ գործունեությանը.
6) միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.
7) բարձրացնել համայնքապետարանի աշխատակազմի կառավարման արդյունավետությունը:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ՝արտահայտված տոկոսով,
- Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)

Հ/Հ	Ցուցանիշները	2017	2018	2019	2020	2021
1.	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	**10%**	**10%**	**9.0%**	**9.0%**	**8.0%**
2.	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով	**0.7%**	**2.0%**	**1.7 %**	**1.7 %**	**1.8%**
3.	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	**0.5%**	**0.5%**	**0.5%**	**0.5%**	**0.5%**

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

Համայնքում հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել բարեկեցիկ: Այս ուղղությամբ համայնքապետարանն իր առջև խնդիր է դնում բարեփոխումներ կատարել հետևյալ բնագավառներում՝

1) ապահովել բոլոր թաղամասերի երկարատև ջրամատակարարումը.
2) ավելացնել որոշ թաղամասերի գազաֆիկացման ծավալները.
3) շարունակական ծրագրով իրականացնել ջրահեռացման (կոյուղու) համակարգի կառուցման աշխատանքները.
4) շարունակել լուսավորման համակարգերի կառուցման և դրանց սպասարկման աշխատանքները.
5) բարեկարգել փողոցները:

Նախատեսվում է գազամատակարարման գործընթացը շարունակել և 2017-2021 թվականներին գազատար ցանցեր անցկացնել ոչ գազաֆիկացված փողոցներում: Այս ծրագրի իրականացման ընթացքում ակնկալվում է ՀՀ Արմավիրի մարզպետարանի աջակցությունը, քանի որ այն բավականին տարողունակ խնդիր է:

Համայնքի կարևորագույն խնդիրներից մեկը կեղտաջրերի հեռացման՝ ջրահեռացման համակարգերի վերանորոգումն է: Նախատեսվում է այդ աշխատանքն իրականացնել շարունակական ծրագրով: Այդ աշխատանքների շարունակումը առանց նպատակային ներդրումների գրեթե անհնար է: Միայն կապիտալ ներդրումային դաշտի և ֆինանսապես կայուն օժանդակության շնորհիվ ամբողջ ծավալով ծրագրի իրագործումը կհամարվի իրատեսական:

Նախատեսվում է շարունակել լուսավորման համակարգի կառուցման և շահագործման աշխատանքները, ընդգրկելով ևս 2 փողոցներ: Վերը նշվածն իրականացնելուց հետո նշված խնդիրը համայնքի համար լուծված է:

Ծրագրավորվում է իրականացնել փողոցների բարեկարգում, յուրաքանչյուր տարի կատարել փոսային վերանորոգման աշխատանքներ:

- Համայնքի ղեկավարի իրավասության շրջանակներում միջոցներ ձեռնարկել պաշտպանելու համայնքի բնակիչների իրավունքներն ու շահերը:

  Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման համար: Համայնքում ուշադրության կենտրոնում է բնակչության սոցիալական պայմանների բարելավման խնդիրը: Առողջապահության ասպարեզում համայնքապետարանի կողմից նախատեսվում է 2017-2021 թվականներին շարունակել աջակցությունը, որպեսզի պատշաճ մակարդակով կազմակերպվի համայնքի բնակչության բժշկական սպասարկումը: Մեր ժամանակին համահունչ է բարեգործական միջոցառումների ձեռնարկմամբ բնակչության սոցիալապես անապահով խավերին ինչ-որ չափով նեցուկ կանգնելու խնդիրը: Սոցիալապես անապահով խավերին օգնելու համար յուրաքանչյուր տարի համայնքի բյուջեում նախատեսվելու են մոտ 1.2 -ից 1.5 միլիոն դրամ գումար:

  Նոր օրենսդրական ակտերը և անհրաժեշտ տեղեկատվությունը ժամանակին ստանալու համար համայնքապետարանը օգտվում է իրավական տեղեկատվական ծառայություններից:

  Գործում է Շահումյանի թ/ֆ համայնքի ինտերնետային կայքը, որը հնարավորություն է տալիս համայնքի բնակչությանը պարբերաբար տեղեկացված լինելու համայնքի գործունեությանը, ծանոթանալու գյուղում իրագործվող և իրագործվելիք ծրագրերի ու բարեփոխումների ընթացքին, տեղեկություններ ստանալու համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների մասին:

  Ինտերնետային կայքը հնարավորություն է տալիս համայնքի բնակչության հետ բաց երկխոսության միջոցով համատեղ ուժերով լուծելու համայնքում առկա հիմնախնդիրները: Կայքի

վերաբերյալ բնակչության կարծիքներն ու առաջարկությունները նկատի առնելով՝ փորձեր կարվեն կայքի բարելավման ուղղությամբ:
Համայնքապետարանում ներդրվել է նաև տեղեկատվական ավտոմատացված համակարգ, որի օգնությամբ մարզպետարանի հետ գործում է էլեկտրոնային նամակագրություն:

- Բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակն ու որակը՝ բարելավելով համայնքի բյուջեի եկամուտների հավաքման աշխատանքները և նպատակային օգտագործելով բյուջեի միջոցները
- Բարելավել համայնքի բյուջեի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները:
- Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանություն: Համայնքում գյուղատնտեսության բնագավառի զարգացումն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ խնդիրները.

1) աջակցել գյուղացիական տնտեսություններին՝ ոռոգման ջրով ապահովելու գործում.
2) կազմակերպել գյուղատնտեսական հողերի հաշվառում, փաստագրում, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով հատկացում.
3) օգնել գյուղացիական տնտեսություններին ձեռք բերելու թունաքիմիկատներ, վառելիք և սերմեր՝ շուկայականից ցածր գներով.
4) անասնապահության բնագավառում իրականացնել անասունների հաշվառում, պրոֆիլակտիկ բուժում և կազմակերպել հակահամաճարակային միջոցառումներ:

- Շրջակա միջավայրի պահպանության բնագավառի զարգացումն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ գործառույթները.

1) ավելացնել փողոցների սանիտարական մաքրման և աղբահանության ծավալները.
2) իրականացնել կանաչապատման աշխատանքներ.
3) աջակցել շրջակա միջավայրի առողջացմանը և սանիտարական մաքրությանը.
4)բնակչության կենցաղային աղբի հեռացման ծառայությունների բարելավում:

Նախատեսվում է շարունակել իրականացնել այս աշխատանքները նաև հաջորդ տարիներին՝ ավելացնելով աղբահանության ծավալները, բնակչության շրջանում աշխատանք տանել շրջակա միջավայրի մաքրության, պահպանության գործում:
Կանաչապատման ուղղությամբ համայնքապետարանը նախատեսում է կազմակերպել ծառատունկ համայնքապետարանին հարակից տարածքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական ծրագրերն են՝

- **Համայնքի փողոցների վերանորոգում**
- **Համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ավարտում**
- **Մանկական խաղահրապարակների կառուցում**
- **Համայնքապետարանի շենքի ընթացիկ նորոգում**
- **Ջրահեռացման համակարգի վերանորոգում**
- **Մանկապարտեզի կառուցում**

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրերի անձնագրերում:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ն 1

Համայնքապետարանի շենքի ընթացիկ նորոգում
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքապետարանի շենքը գտնվում է վատ վիճակում,բացակայում են աշխատանքային բարեկեցիկ պայմանները						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Աշխատանքային բարեկեցիկ պայմանների ապահովում համայնքապետարանում							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0		0	0	0	0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0		0	0	0	0
2.Շենքի շինարարական ածխատանքներ	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0		0			
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Նախահետազոտական ծախսեր: 1.2.Նախահաշիվների կազմում: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Նորգման աշխատանքների կազմակերպում 2.2. Աշխատանքների ավրտ, կատարողական և ընդունման հանձնման ակտերի կազմում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բարեգործություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքապետարանի աշխատակազմ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2019թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքապետարանի շենքի ընթացիկ նորոգում						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐՈՆ

<u>Մանկական խաղահրապարակների կառուցում</u>
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում բացակայում են մանկական այգիներ, պուրակներ և խաղահրապարակներ: Երեխաների համար չկան ազատ ժամանցի կազմակերպման համար վայրեր						
Ծրագրի անմիջական նպատակ՝ համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ազատ ժամանցի կազմակերպում							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0.0	0.0				
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-		.		-	-
2.Տարածքի բարեկարգում և միջոցների ձեռքբերում	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում 1.2.Շինարարական կազմակերպության ընտրության մրցույթը 1.3. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ իրականացնել աշխատանքները 1.4 Տեխնիկական միջոցների ձեռքբերում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Իրականացնել աշխատանքները 2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բարեգործություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները, նախադպրոցական տարիքի երեխաները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախադպրոցական տարիքի երեխաների համար խաղահրապարակների ստեղծում						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ո Ն

<u>Ջրահեռացման համակարգի վերանորոգում</u>

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի ջրահեռացման համակարգի խաթարված վիճակ						
Ծրագրի անմիջական նպատակ՝ համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում:							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	-			-	-
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-		-	-	-	-
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
2 Խմելաջրի ցանցի. կառուցել						-	-
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.2.Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Իրականացնել աշխատանքները 2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝ հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Պետության աջակցություն						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Շահումյանի թ/ֆ համայնքի ջրահեռացման համակարգի վերանորոգում						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N4

Համայնքի փողոցների և ճանապարհների հիմնանորոգում

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի փողոցների և ճանապարհների նորոգում և հիմնանորոգում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ ունենալ նորգված, բարեկարգված փողոցներ և ճանապարհներ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
2. Փողոցների և ճանապարհների բարեկարգում, հիմնանորոգում և նորոգում	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում 1.2.Շինարարական կազմակերպության ընտրության մրցույթը 1.3. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ իրականացնել աշխատանքները 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Իրականացնել աշխատանքները 2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի փողոցների և ճանապարհների նորոգում և հիմնանորոգում						

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ն 5

<u>Համայնքի արտաքին լուսավորության ցանցի վերականգնողական աշխատանքների ավարտում</u>

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի արտաքին լուսավորության ցանցի վերականգնում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ ունենալ գիշերային լուսատուներով լուսավորված, բարեկարգված փողոցներ							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-					
2. Լուսավորության ցանցի վերականգնում	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Իրականացնել աշխատանքները 2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	-						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի արտաքին լուսավորության ցանցի վերականգնում						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐՈՆ

<u>Մանկապարտեզի կառուցում</u>
(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքը չունի մանկապարտեզ</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ՝
Համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ուսոցում, դաստիարակություն</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ
1.Փաստաթղթերի կազմում

2. Զբոսայգու կառուցում</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում
1.2. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ, իրականացնել աշխատանքները
2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1. Իրականացնել աշխատանքները
2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ հազար դրամ
Կապիտալ ծախսեր՝ հազար դրամ
Ընդհանուր բյուջեն՝ 10.000.000 հազար դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Բարեգործություն, դոնոր կազմակերպություն, պետական աջակցություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի նախադպրոցական տարիքի բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Համայնքի մանկապարտեզի կառուցում</td></tr>
</table>

4. ՀԶՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶՀԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀԶՀԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

Շահումյանի թ/ֆ համայնքի ՀԶՀԾ-Ի ֆինանսավորումն ամփոփված է կից ֆայլում:

Աղյուսակ 7. ՀԶՀԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
(Շահումյանի թ/ֆ համայնք)
(2017-2021 թթ.)

Պարտադիր խնդիր	Բյուջե տա-վորվա ծ միջոցն ներ	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ֆինանսավորման աղբյուրներ					Ծախսերի դասեր			Ֆինանսավորման կարգավիճակ			
		2017	2018	2019	2020	2021	Համայնքի սեփական եկամուտներ	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	Բարեգործություն/ հովհարտանիություն	Պետություն-համայնք-գործընկերություն համագործակցություն	Այլ աղբյուրներ	Ընթացիկ ծախսեր	Կապիտալ ծախսեր	Ֆինանսավորումն առկա է	Ֆինանսավորման շուրջ ընթանում են բանակցություններ	Ներկայացվել է	Ֆինանսավորումը դարձել է անցյալ
Համայնքապետարանի շենքի ընթացիկ նորոգում							V	V		V								
Մանկական խաղահրապարակի կառուցում							V			V		V						
Ջրահեռացման համակարգի վերանորոգում										V		V						
Փողոցների վերանորոգում							V	V										
Արտաքին լուսավորության համակարգի վերականգնողական աշխատանքների վարտում							V											
Մանկապարտեզի կառուցում										V		V						

5. ՀԶՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀԶՀԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

ՀԶՀԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

Կից ֆայլ*ում* ներկայացված է ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

Աղյուսակ 8. Մ Ո Ն Ի Թ Ո Ր Ի Ն Գ Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔ
(2017-2021 թվականներ)

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	Ցուցանիշի փաստացի արժեք (2016)	Ցուցանիշի թիրախային արժեք (2017)	Ցուցանիշի փաստացի արժեք (2017)	Ցուցանիշի կատարողական (2017)	Ցուցանիշի թիրախային արժեք (2018)	Ցուցանիշի փաստացի արժեք (2018)	Ցուցանիշի կատարողական (2018)	Ցուցանիշի թիրախային արժեք (2019)	Ցուցանիշի փաստացի արժեք (2019)	Ցուցանիշի կատարողական (2019)	Ցուցանիշի թիրախային արժեք (2020)	Ցուցանիշի փաստացի արժեք (2020)	Ցուցանիշի կատարողական (2020)	Ցուցանիշի թիրախային արժեք (2021)	Ցուցանիշի փաստացի արժեք (2021)	Ցուցանիշի կատարողական (2021)	Տվյալների հավաքագրման ամսաթվերը		Ցուցանիշի ստացման աղբյուր	Ցուցանիշի ստացման մեթոդ
																	Կիսամյակ յին	Տարեկան		
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ																				
1.Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)																		X	Մարզպետա-րան, համայնքապետարան)	Փաստաթղթայ ին ուսումնասիրու թյուն/հարցազրույց
2.Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով																		X	Համայնքա-պետարան	Փաստա-թղթային ուսումնա-սիրություն
3.Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով, չհաշված համայնքի բնակչության փոփոխությունը բնական աճի պատճառով																		X	ՀՀ Ոստիկանութ-յուն	Հարցում
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ																				

1.Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ																			
1.1.Համայնքապետարանի շենքի ընթացիկ վերանորոգում																	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
2. Համայնքի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատան պահպանումը և գործունեության ապահովումը																			
2.2. Համայնքի փողոցների բարեկարգում																	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
2.5.Համայնքի խաղահրապարակի կառուցում																	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
																	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն
4.Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպաստում, սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության իրականացում, հանգստի գոտիների ստեղծումը																			
4.7. Համայնքի մանկապարտեզի կառուցում																	X	Համայնքապետարան	Փաստաթղթային ուսումնասիրություն

5.Բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով																				

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման և կատարման աշխատանքները կազմակերպելիս:

Ելնելով Շահումյանի թ/ֆ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից՝ շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը: 2017-2021թթ. համայնքային բյուջեները պետք է մշակել՝ որպես զարգացման ծրագրային բյուջեներ, որոնցով հնարավոր կլինի իրականացնել ինչպես ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր ծրագրեր:

Համայնքապետարանի աշխատակիցները կմշակեն իրենց բնագավառի զարգացման կոնկրետ ծրագրեր, որոնք կարելի է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն, մարզպետարան: Լրացուցիչ ներդրումներ հայթայթելու նպատակով նախատեսվում է փնտրել ինվեստիցիաների նոր աղբյուրներ, ներգրավել գործարարների սեփական միջոցները, տարբեր սոցիալական հիմնադրամների ներդրումները:

ՀԶՀԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2017-2021թթ. ընթացքում ՀԶՀԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինասնական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀԶՀԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքի յուրաքանչյուր բնակիչ: ՀԶՀԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀԶՀԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶՀԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀԶՀԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

Հիմնվելով ՀԶՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶՀԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶՀԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶՀԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶՀԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Աշխատակազմի քարտուղար Լ. Ղասաբյան